վարչութենէ ուսումնարանին ըստ ներելոյ հանգամանաց ։

-, ԺԲ. Իւրաքանչիւր գիշերօթիկ ուսանող վճարեսցէ վարչութեան ուսումնարանին ի տարին գլխուն ռուբլի և զմի խալւար ցորեան ի վարձ ուսումնական պիտոյից և ուտելեաց, այլ և հոգասցէ զգանելիս և զանկողինս իւր ։

Գ. ՑԱՂԱԳՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՉԱՑ

,, ԺԳ. Ուսուցիչք ընտրին և հաստատին ըստ 22րդ յօդուածոյ կանոնադրութեան Եկեղեցական-Ծխական ուսումնարանաց մերոց, իսկ ուսուցիչքն կրօնի և երգեցողութեան ընտրին և հաստատին յԱռաջնորդէ վիճակին ։

,, ԺԴ. ի հոգևոր ծայրագոյն իշխանութենէ հաստատեալ կանոնադրութիւնս կայցէ ի գործս Առաջնորդին՝ կամ վիճակային տեսչին, իսկ կրկին վաւերացեալ պատճէնքն մնասցեն առ վանահայրն և վարչութիւնն վասն կանոնաւորն գործադրութեան ։

ԺԵ. Թեմական Առաջնորդին իրաւունք են, ի պահանջել հանգամանաց՝ բարեփոխել զյօդուածս կանոնացս յաւելմամբ կամ փոփոխմամբ նոցին, և այն՝ նախընթաց գիտութեամբ և հաստատութեամբ Վեհ. Հայրապետի Ազգիս ։

,, Հաւան գտեալ ընդ այս կանոնադրութիւն Բուլղարեան Վանական երկդասեան ուսումնարանին Սաղիանի՝ հաստատեմք։

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Համար 147
ի 6 ապրիլի 1888 ամի Փրկչական
և ի թուականութեան մերում ՌՅԼԷ
ի Ս. Էջմիածին

Այս կոնդակի և կանոնադրութեան ստացման մասին յետ յայտնելոյ Վեհ. Կաթուղիկոսին ի միամտութիւն յայտարարութեամբս յ30 ապրիլի 1888 հմ. 145. գրեցի ի 1 մայիսի հմ. 150 ով. Մովսէս աւագ եղբօրն Բուլղարեանց, կանոնադրութեան հաստատման մասին և Բուլղարեան տոհմից հիմնադիր անդամ ընտրելու համար, հետեւեալ բովանդակութեամբ ։